



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԱՐԱՅԻ

Ս Ր Բ Ա Ջ Ա Ն 

  Ժ Ա Մ Ե Ր

Ց ե ս ր ա ն ա ջ ի ն

Հրատ. Արշակ Մ. Մելիք-Կարակոզմանի.

1904 թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Թիֆլիս.

891.99

Ա-89

1045

06 DEC 2014

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page]

005-330.00

891.99-1

Ա Ր Ա Բ Ի

01 JAN 2009

1001
976

Մ Ր Բ Ա Զ Ա Ն Ժ Ա Մ Ե Ր

(բանաստեղծություններ)

Բովանդակություն

- | | |
|----------------------|-------------------------|
| 1. Ալիքներ. | 11. Գիշերն անա մուծ... |
| 2. Յաւերժահարս. | 12. Վե՛ն գիշեր լինէր... |
| 3. Ծովի եղերքին. | 13. Երգ. |
| 4. Կաւալարին. | 15. Հերիած. |
| 5. Ժպիտը վառ. | 16. Երբեմն այնպէ՛ս... |
| 6. Ի՛նչ կըլինէր. | 17. Ես թաղել եմ... |
| 7. Արծուին. | 18. Զգտի՛ր դէպի ինձ. |
| 8. Գարուն. | 19. Ծաղիկներս... |
| 9. Աջքիս առջև... | 20. Մանկական երգ. |
| 10. Ո՛հ, ո՛ւմ համար. | 21. Մի նոր զարուն. |
| | 22. Երազ. |

ՏԵՏԲ ԱՌԱՋԻՆ

Հրատ. Արշակ Մ. Մելիք-Կարապետեանի.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մարտիան փողոց № 15

1904

(53)



21 FEB 2013

27243



* * *

Böse Menschen-keine Lieder.

Առանց հոգերուղիս, վսեմ երգերի՝
 Մարդիկ նման են կենդանիներին...
 Եւ ուր երգ չըկայ՝ այնտեղ կեանք չըկայ
 Եւ կեանքը չունի ներկայ, ապագայ.
 Այլ խաւար է նա՝ սևով քողարկված
 Եւ ցածր է նա՝ գարշուժեան մատնված...
 Եւ լոկ սրբազան վեհ ժամերն երգի
 Մեզ շունչ են տալիս և՛ կեանք և՛ ոգի...

Дозволено Цензурою. Тифлиси, 2-го Сентября 1904 года.





Ա Լ Ի Ք Ն Ե Ր.

Մենք հպարտ ծովի ալիքն ենք կայտառ.
Երբեմն խաղաղ երազում ենք մենք...
Երբեմն ապստամբ՝ մենք չունենք դադար
Ու խելացընոր աղմուկում ենք մենք...
Ցընորքների մէջ երազ ենք տեսնում.—
Մի փրփուրագգեստ հրաշալի փէրի
Մագերն ոսկեգոծ՝ ջուրն է ելնում,
Աչերը նման անծայր ծովերի...
Ու պատմում է մեզ կախարդ զրոյցներ
Մի այլ երջանիկ աշխարհի մասին.
Կաշկանդում են մեզ ժպտուն ցընորքներ,
Մենք երազում ենք ծովում միասին...
Ձգտում ենք անվերջ... երգեր ենք երգում...
Եւ ոգևորված խրդախ երգերից՝
Մենք ժիր, խանդավառ խաղեր ենք սարքում,—
Ծովը շրփոթվում մեր գոռ խաղերից...
Ծնվում են մեր մէջ անթիւ բաղձանքներ,
Հրգեհի նըման բորբոքում են մեզ.
Ու մենք փրփրված՝ պտտորում ենք ջրեր,
Տարերքն ենք խառնում խելառների պէս...
Մենք բարձրացնում ենք ծովում փոթորիկ

Այրված ու թովված բուռն տենչանքներից,
 Մեզ զրոյց է պատմում մի ծովի դատրիկ,
 Մեզ դիւթում, հմայում, բորբոքում նորից...
 Մենք հպարտ ծովի ալիքն ենք կայտառ.
 Երբեմն խաղաղ երազում ենք մենք...
 Երբեմն ապստամբ՝ մենք չունենք դադար
 Ու խելացընոր աղմուկում ենք մենք...



ՅԱԻԷՐԺԱՀԱՐՍ

Ես-ծովերի յաւերժահարս—
 Ծնվել եմ գոռ փոթորկից.
 Ինչպէս կախարդ մի հըմայող՝
 Ես հզօր եմ ամենքից...

Ես-մի դատրիկ, կախարդ դատրիկ—
 Ծովի խորքումն եմ ապրում...
 Երգըս՝ անվախ, երգըս՝ քաղցրիկ—
 Ես խենթ տղին եմ սիրում...

Իմ աչերի շողքի խաղից
 Ծովն է յուզվում, խենթանում.
 Իմ համարձակ, անուշ տաղից
 Ծովն է ուռչում, բարձրանում...

Օ՛, ես-կարօտ հպարտ տղին,—
 Գայ ինձ խլէ ու տանէ.
 Քաջ, անվեհեր, խիղախ տղին,—
 Գայ ինձ վերցնէ, կին առնէ...



Ծ Ո Վ Ի Ե Ձ Ե Ր Ք Ի Ն

Ես թափառում եմ սիրուց գրժահար
 Ու ծովի եզրին ցընորում եմ ես...
 Այրվում է հոգիս... այստեղ վշտահար՝
 Բ՛նուն կարօտով ես կանչում եմ քեզ.

Այստեղ քեզ համար տաղեր եմ հնարում
 Ու գժված վշտից՝ հեռում եմ տկար...
 Սէգ ծովի եզրին ես քեզ եմ փնտրում,
 Ձի՛ւ բարձր ձայնով կանչում եմ երկար.

—Ո՛հ, արի՛, յայտնվի՛ր ծովի խորքերից,
 Դ՛նւ, փրփուր հագած սքանչելի՛ փէրի...
 Ծ՛նվի՛ր ինձ համար սէգ ալիքներից,
 Դ՛նւ, ըմբոստ աղջիկ փոթորիկների...—

Ու գընահատի՛ր իմ սիրտն ու հոգին,
 Եղի՛ր իմ կեանքի բոցավառ փարոս.
 Իմ կի՛նը եղի՛ր... Թռչնիկը՛ն անգին,
 Այս խաւար կեանքում եղի՛ր իմ փարոս...—

Գուս ծովի եզրին հե՛ռւ եմ տկար,
 Իմ կըրակ սիրով ջըրերը յուզում...
 Ձի՛ւ բարձր ձայնով կանչում եմ երկար,
 Քեզ համար սիրոյ երգեր եմ ասում.

—Ո՛հ, արի՛, յայտնվի՛ր ծովի խորքերից,
 Դ՛նւ, փրփուր հագած սքանչելի՛ փէրի.
 Ծ՛նվի՛ր ինձ համար սէգ ալիքներից,
 Դ՛նւ, անվախ աղջիկ փոթորիկների...—



X
Ն Ա Ի Ա Վ Ա Ր Ի Ն

Թող դոռան-դոչէն ալիքը կատղած,
Թո՛ղ փրփուր թափէ ծովըն անխընայ.
Անփո՛րձ նաւավար, սըլացի՛ր յառաջ,
Հաւատը սրտումդ, աներկիւղ, անահ...

Նաւակդ՝ ամուր, բազուկներդ՝ ուժեղ.—
Դու զո՛հ չես գնալ ցասկոտ տարերքին.
Կովի՛ր ասպարէզ... մարանչի՛ր այնտեղ,
Փորձված, յաղթութեամբ հասի՛ր եզերքին...

Տես, ահա հեռվից փարոսն անդադրում
Լուսաւորում է քո ուղին դժուար.
Դու աննպատակ չես շրջի ծովում,
Պատուի՛ր ալիքը, գնա՛ նաւավար...



Ժ Պ Ի Տ Ը Վ Ա Ռ ...

(Էլէզիա)

Ժպիտը վան, ցնորքի նման՝
Պահ մը փայլից ու անցան
Այն սէրն՝ անգի՛ն ու աննըման
Ու այնպէ՛ս շուտ չըքացաւ...

Այն թանկագին վայրկեանները—
Այնքան անո՛ւշ ու գողտրիկ...
Այն սիրաշունչ համբոյրները,
Շուրթերն-ալ-վարդ ու քաղցրիկ...

Աշխարհն ասես՝ գեղածիծաղ
Մի եղե՛մ էր խանդավառ.
Ի՞նչ էին երգ, ժպիտ, ծիծաղ,
Վարդեր, ծաղկունք սիրավառ...

Զրոյցն է մնացել այժմ միայն
Այն երջանիկ օրերի.
Ու թունաւոր կսկիծը խոր
Սիրտ քրքրող յուշերի...

Փպիտը վառ, ցնորքի նման՝
Պահ մը փայլեց ու անցաւ
Այն սէրն անգի՛ն ու աննըման
Ու այնպէս շո՛ւտ չըբացաւ...



Ի՛նչ կ'ըլինէր...

Ի՛նչ կ'ըլինէր, որ գարուն գար մեզ համար,
Դեռ չըծաղկած մի ծիծաղկոտ, նոր գարուն...
Անո՛ւշ ծաղկունք, վարդեր բերէր անհամար.
Մի գարուն գար, մշտադաւան, նոր գարուն...

Ի՛նչ կ'ըլինէր, որ գարուն գար մեզ համար...
Կեանքի՛ գարուն... ու մեր յոյզեր, մեր տենչեր
Ծիածանի պէս կապէին վառ կամար.
Մի գարուն գար... կեանքի գարուն բախտարեր...



Ա Ր Ծ Ո Ի Ի Ն

Արծիւ, սըլացիւր անհուն եթերում
 Ազատ ու արծակ
 Ազատ ես, արծիւ, երկնի կամարում,
 Արծիւ համարծակ...

Արծիւ, սէգ թռչուն, իշխիւր անվեհեր
 Վեհ բարձունքներում,
 Գահիդ պատուանդան՝ ժայռեր ու լեռներ,
 Գահըդ՝ բարձրում...

Անտառուտ լեռան ճեղքուած կատարին
 Ամուր բոյն շինիր.
 Արծիւ, բարձրաբերձ լեռան կատարին
 Զագուկներ սնիր...

Թնդ ճախրեն ազատ, սըլանան արծակ
 Նոքա եթերում,
 Թնդ շնչեն ազատ, թռչեն համարծակ
 Անհուն վայրերում...

Մի պատմիր նրանց միայն նախնական
 Հեքեաթն ազդու,
 Որ իբրև աւանդ առասպելական՝
 Ժառանգել ես դու...

Որ հեռւ, այնտեղ, անծայր ներքեում—
 Երկրի երեսին
 Սողում են երկար դարեր անդադրում
 Մարդիկ միասին...

Որ երբեմն այնտեղ կուլ է լինում
 Նոցա մէջ անեղ,
 Սըրբերի շաչիւնն երկիրն է հասնում,
 Թնդում ամեն տեղ...

Որ երբեմն այնտեղ տօն է կատարվում,
 Զուգվում են մարդիկ.
 Ու դիւթիչ հրաշքներ յանկարծ կատարում
 Թէ մեծ, թէ պստիկ...

Որ յաջորդաբար լավում են նոր-նոր
Սրբազան երգեր,
Ծնվում վեհ մտքեր, լավում զօրաւոր
Ճառեր ու խօսքեր...

Բայց որ մինչև այժմ ներքևում նորա
Սողում են դարձեալ,
Երկրի երեսը կամայ-ակամայ
Մաշում են դարձեալ...

Ոհ, ըս նախնական հեքիաթն, արծիւ,
Նրանց մի պատմիր.
Ինքնակալ իշխան, համարձակ արծիւ,
Մարդկանց մի ծաղրիր...



Գ Ա Ր Ո Խ Ն.

Փէրին եկաւ կրժքին զուգած
Ծաղկեայ փարթամ պըսակներ.
Կանաչ մաղերն վնջեր հագած—
Անթիւ վարդեր, շուշաններ...

Ա՛խ, սիւ է ինձ թովում, տանում
Ծաղկոտ մարգեր, վառ լեռներ.
Հոգիս խլում ու սըլանում
Կանաչ դաշտեր, հովիտներ...

Ա՛խ, սիւ է այն ինձ կախարդել
Ցընորքների աշխարհում.
Միտքս գերել, հոգիս դիւթել
Հեքիաթների ծովերում...—

Գարունն եկաւ ժպտուն, զուարթ,
Լանջին՝ կոկոն—ժաղիկներ...
Այտերը-վարդ, աչերը-զարդ,
Գլխին ծաղկեայ յեղերներ...



ԱԶՔԻՍ ԱՌՉԵԻ...

Աչքիս առջև ահա՛ն յայտնվեց
Հի՛ն անցեալի մի վառ յուշ,
Սիրա բռբռնող, արցունք խլող,
Անգին սիրոյ մի գեղ յուշ...

Ա՛խ, այդ դձեք էք, անտանկ աչեր,
Խարոյկի պէս բոցավառ.
Սիրով այրված անհոնն աչեր,
Աստղերի պէս լուսավառ...

Եւ առուակն է մեղմ քչքչում
Հովտի միջին ծաղկալի.
Սիրոյ զրոյցն է նա մրմնջում
Քո վարդագոյն շուրթերի...

Նստած եմ ես լճու, շուարած,
Կայտառ առլի գեղ եզրին.
Եւ լսում եմ, ահանջ դրած
Նորա կախարդ երգերին...

Նա քաղցրածայն կարկաչելով՝
Խօսում է քո շուրթերից.
Դու հեռւմ ես, հառաչելով
Քնքուշ սրտիդ խորքերից...

Եւ անո՛ւշ էր կեանքն այն անցած,
Երազի պէս ոսկէվան...
Ահա՛ աչերդ անվերջ յառած՝
Նայում ես ինձ խանդավառ...



Ո՛հ, Ո՞հՄ ՀԱՄԱՐ...

Ո՛հ, սեմ համար հիւսեմ փնջեր,
Քաղեմ շուշան ու ալ-վարդ,
Ծաղիկներից կապեմ փնջեր—
Անսուշ կուսի կրծքի զարդ...

Ու ես արտում լսւո շրջում եմ
Ծաղկոցի մէջ միայնակ...
Սրտի ցաւով մրմնջում եմ
Մի հեծեծող եղանակ.—

—Ո՛հ, սեմ համար հիւսեմ փնջեր,
Քաղեմ շուշան ու ալ-վարդ,
Ծաղիկներից կապեմ փնջեր—
Սիրած կուսի լսնջի զարդ...



* * *

Գիշերն ահա մութ ու խաւար
Թողել է ինձ լեռներում.
Բլբլի գլխին, միտքս շուար,
Երգ եմ սուլում անդադրում...

Շուրջս խաղաղ... սուլում եմ ես
Մի անորոշ եղանակ.
Տրտում է նա ու սիրակէզ...
Ես եմ ու նա միանակ...

Իմ շրթունքին գողգողալով՝
Ջառանցում է նա քաղցրիկ...
Հեծեծում է, երազելով
Մի նազանի գեղ դատրիկ...

.....

Եւ լսվում է մի շշնջոց
Խօլ-խաւարում գիշերի,
Քաղցրահնչիւն մի մրմնջոց
Վառ կանացի շուրթերի...

Լուս գիշերի քաջքն է գալիս,—
Աներևոյթ մի աղջիկ.
Մազերն՝ արձակ, աչերը՝ ծով
Ջքնանդ, սիրոնն մի աղջիկ...

Ու գալիս է վըզիս փարում
Ու շշնջում ականջիս
Միբոյ հեքիաթ, սիրոյ զբոյց,—
Ականջ դնում սուլոցիս...

Ու լուս է... սուլում եմ ես
Մի աննրման եղանակ,
Շշնջում է փերին ինձ հեզ,
Թովում, թովում մեն-մենակ...



Վե՛հ ԳԻՇԵՐ ԼԻՆԷՐ.¹¹

Վե՛հ գիշեր լինէր... աննրման գիշեր...
Ու մենք խորհէինք լուրջ, անշէղ, խոհուն.
Ու մեզ գիւթէին սրբազան խոհեր,
Մեր կեանքի մասին խորհէինք անհուն...

Սուրբ գիշեր լինէր... ու գողարիկ-գողարիկ
Վառվռուն ցնորքներ միշտ մեզ այց գային.
Մենք ցընորէինք լոխկ ու ֆնջիկ
Ու երազէինք եղեմն երկրային...

Կեանքը միտք լինէր վե՛հ ու հանձարեղ,
Ամենքի համար նա մեծ միտք լինէր...
Կեանքը ցնորք լինէր մաքսւր ու շքեղ,
Ամենքի համար նա սուրբ ցնորք լինէր...



Ե Ր Գ.

Ես իմ վիշտը ընդմիշտ տուի
Ահեղ քամու հոսանքին,
Որ նա տանէ, յանձնէ ծովի
Լի ցաւերով գոռ կրծքին...

Թո՛ղ ցաւերի գոռ ծովի հետ
Եւ իմ վիշտը միանա.
Յորձանք տալով՝ ծովը վէտ-վէտ,
Յուզվի, գոռն, բարձրանն...

Թո՛ղ իմ վիշտը լինի ծովին
Ծովինը—իմ այսուհետ.
Յասման ժամին փրփուր թափենք,
Կռիւ սկսենք ժայռի հետ...



Հ Ե Ք Ի Ա Թ.

Գիշեր ժամին, լուսնակ ժամին
Գետն է կամայ քշպըչում.
Կախարդ ժամին, գաղտնի ժամին
Գետն է անսուշ կարկաչում...

Գետի միջից դուրս է գալիս
Մի աննըման նազ-փէրի,
Հագին փրփուր շողողալիս՝
Մի սիրունիկ լալ-փէրի...

Լուսնակն է մեղմ նրան ժպտում—
Կոյնն-ամաչկոտ, կոյսը-հեղ...
Լուսնի շողն է նրան պագնում—
Կոյսը՝ դժգոյն, մոմի պէս...

Լուսնակ ժամին, գաղտնի ժամին
Գետն է մեղմել շշնջում.
Ջրրի վրայ օրօրվելով՝
Փէրին երգ է մրմնջում...

Երգում է քնդցր... անուշ ձայնով
Բընութիւնը հըմայում.
Երգում է մեղմ, կախարդ ձայնով
Սիրած տղին ձիգ կանչում...

Շատ չի անցած՝ մռայլ հանդարտ
Գալիս է մի պատանի,
Լուս ու մուր, շուար, հպարտ,
Հասակն՝ անգին, գեղանի...

Ու գալիս է անխօս նստում
Գետի դալար եզերքին,
Յափշտակված ու հըմայրված՝
Ականջ դնում կուսերգին...

Թվում է նրան, թէ ինքն է այն
Երգում սրտի խորքերից.
Թվում է... իր հոգին է այն
Պատմում կեանքի ցաւերից...

Արտասվում է... թմրում է նա
Եւ ինքն իրան մոռանում...
Ու մամուպատ քարի վրայ
Պառկում է նա ու նիրհում...

Ու տեսնում է... ապլից ծնված
Մի կոյս չքնաղ, անարատ,
Մի դիցունի իր մօտ նստած՝
Պատմում է վառ մի հեքիաթ...

Պատմում է նա. մոմ-շուրթերը
Դողդողում են հանդարտիկ,
Խըլում իրա արցունքները,
Երգ մրմնջում անուշիկ...

Ու պատանին շնչում է խոր,
Սիրտը խփում սաստկազին
Ու յուզվում է նա վիրաւոր,
Փրփրվում է զայրազին...

Եւ ուռչում են տանջանքները
Եւ վշտերը նրա կրծքում,
Փրփրվում են գոռ ցաւերը—
Նա հետում է, փոթորկվում...

—Կեանքս, հոգիս, ես քեզ համար
Տես, բերում եմ ողջակէզ,
Դո՛ւ, կարիքի դարդոտ տղայ,
Ես սիրում եմ միայն քեզ...—

Գիշեր ժամին, լուսնակ ժամին
Ջուրն է կամաց բըշփըշում.
Ցընորքներում գետի փէրին
Տըղին հեքիաթ է պատմում...



Ե Ր Գ.

Այն լուսնշող երեկոյեան
Ես վշտահանր ու արտում՝
Քեզ մօտ անսուշ ու մեղմածայն
Մի երգ էի մրմնջում...

Լուկ-մնջիկ երգում էի
Ես իմ երգում վառ աստղեր,
Ձերմ կարօտով տենչում էի
Լինել նոցա միշտ ընկեր...

Նազան-հովիկ, ծաղիկ, դալար
Երգիս գաղտնին գիտէին...
Ա՛խ, դո՛ւ միայն չըհասկացար
Քո աչերը երգողին...



Ե Ր Բ Ե Մ Ն ...

Երբեմն այնպէս, բ՛նուն կարօտով
 Ես երազել եմ մի անգին աղջիկ՝
 Փսխան՝ ոսկէվառ ու քնքուշ սրտով,
 Իմ սրտին շատ մօտ մի սիրուն աղջիկ...

Երբեմն շուար ու հոգիս թախծոտ,
 Առանց կարեկցի, յողնած ու մենակ՝
 Ես երազել եմ իմ սրտին շատ մօտ,
 Ինձ քնքուշ սիրող, մի կոյս-աղանեսակ...

Նրան անհամբեր սպասել եմ երկար—
 Ամենաքնքուշ սիրով սիրելու.
 Աղօթել եմ ես հիւանդ ու տկար,
 Որ նա շուտ յայտնվի սիրտս բուժելու...

Ներիր ինձ, էակ... երբեմն տաղտկոտ՝
 Երազել եմ ես մի չքնաղ դատրիկ.
 Աչերն՝ աշխարհներ, իմ հոգուն շատ մօտ...
 Ես քեզ եմ կարծել... սէ, ներիր քոյրիկ...



ԵՍ ԹԱՂԵԼ ԵՄ...

Ես թաղել եմ կրճքիս տակ
 Իմ սէրն՝ անսուշ ու անբի՛ծ...
 Ես թաղել եմ կրճքիս տակ
 Իմ սէրն՝ անսուշ ու անբի՛ծ...

Դեռ կոյս էր նա անարատ,
 Զահէլ, չքնաղ մի կոկոն...
 Դեռ կոյս էր նա անարատ,
 Զահէլ, չքնաղ մի կոկոն...

Զըհաւատաց շիթերին
 Նա խարերայ աշխարհի...
 Զըղիմացաւ խաղերին
 Կեղծ, այլանդակ աշխարհի...

Դեռ չը ծաղկած՝ նա դեղնեց
 Ահեղ, դաժան կսկիծով...
 Զահէլ, շահէլ նա թօշնեց
 Սիրտը լափող թախիծով...



X

ՁԳՏԻՐ ԴԵՊԻ ԻՆՁ...

Ձգտիր դէպի ինձ, ձգտիր անդադար, խղճալի աշխարհ,
 Ձգտիր անընդհատ, վազիր անընդհատ, հասիր իմ ետքից.
 Ահա, ցնորքների կախարդ ու ժպտուն աշխարհն ոսկէվառ,
 Սիրոյ, գեղեցկի ու ճշմարտութեան զրոյցներն ոգելից:

Ես մարգարէ եմ. երջանիկ կեանքի թովող պատմարան
 Ու ես ծնվել եմ մարդկանց անծանօթ չքնաղ վայրերում.
 Ու ես գաղտնիքն եմ վառ երջանկութեան, մարդկանց փրկութեան,
 Ես թովում եմ միշտ, ստեղծում եմ աշխարհ, եղեմի նման...

Այլ է կեանքն այնտեղ... ու սէրն անբիծ է ու մշտածիծաղ,
 Ու անուշ երգեր թովում են այնտեղ սրտեր-հոգիներ.
 Այնտեղ լոյսն է միշտ ժպտալով ծաղկում ու կեանքն է չքնաղ,
 Ու չկայ հառաչ, ճնշում, հալածանք, բիրտ ոյժ, տանջանքներ...

Օ, պաշտիր դու ինձ, օ, սիրիր դու ինձ, թոյլ, թշուառ աշխարհ,
 Ձգտիր անընդհատ, վազիր անընդհատ, հասիր իմ ետքից.
 Ահա ցնորքների կախարդ ու ժպտուն աշխարհն ոսկէվառ,
 Սիրոյ, գեղեցկի, վառ ճշմարտութեան զրոյցներն ոգելից...



* * *

Ծաղիկներս թառամել են,
 Գլխիկները կորացրել...
 Իմ վարդերս թարշամել են,
 Թերթիկները ալըրովել...

Ինչպէ՞ս հիւսեմ ես նրանցից,
 Ուրախ սրտով, վառ փնջեր.
 Ի՞նչպէս կապեմ այն փնջերից
 Սիրուն կրծքին պըսակներ...

Ո՛հ... և կամ թէ՛ ո՞վ կըվերցնի
 Նրանց կրծքին գընկուռ,
 Ու նրանցով հերքը պըճնի,
 Իմ վարդերում սուզվելու...

Ծաղիկներս թառամել են,
 Գլխիկները կորացրել...
 Իմ վարդերս թարշամել են,
 Թերթիկները ալըրովել...



Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ե Ր Գ .

(հուէր Ան. Ահ...ին)

Արի բալիկ, անսուշ բալիկ,
Քեզ սնել է նազելիս.
Արի թիթեռ, կայտան ալիք,
Փարեմ, սեղմեմ քեզ կրծքիս...

Քո մանկական հուշ-շուրթերին
Տեսնեմ ոսկէ ժըպիտներ,
Դիւթված նայեմ քո աչերին—
Տեսնեմ ծովեր, աշխարհներ...

Խնդամ քեզնով, թնդա հողիս,
Թաւշէ մազերդ շոյեմ ես.
Բո՛ւնս սիրով սեղմեմ կրծքիս
Ու կախարդված նայեմ քեզ...

Այն, փոքրիկ, նաշխուն փոքրիկ,
Քեզ սընել է պաշտելիս...
Արի չքնաղ, հրէշտակ-դատրիկ,
Քեզ պահել է նազելիս...



Մ Ի Ն Ո Ր Գ Ա Ր Ո Ւ Ն .

Թո՛ղ հորաբաց այս գարունը հալածվի.
Թո՛ղ անուշիկ վարդ-կոկոններ տըրորվին.
Թո՛ղ կարկուտը անպերջ տեղա ու թափվի—
Վերջ պիտ լինի այս դժնդակ մութ օրին...

Կարկըտահար՝ թո՛ղ թառամն կոկոններ—
Գարունն այնքան բիւր ծաղկունք է մեզ բերել...
Ձմեռն անցաւ... թո՛ղ որոտան գորշ ամպեր—
Ինչ որ լինի՝ մի հոր գարուն է բացուել...



ՓՈԹՈՐԻԿԸ ԾՈՎԻ ՎՐԱՅ.

(հատուած)

Գոռ շանթի նման՝ ծովն է շանթ դառել,
Սև ու գորշ ամպեր հաւաքել գլխին.
Մըրիկի նման՝ մըրիկ է դառել,
Տեսն անարկճ, փրփուրը բերնին...

Հսկայ, մոլեգին ալիքն անդուման,
Գժուած ալիքը ժայթքում են ծովից.
Անյաղթ, գալարուն վիշապի նման՝
Հուր, բոց են թափում ծովի խորքերից...

Յորձանք են տալիս ախան ջրերով,
Գազանի նման մանչում ուժգին,
Եւ ոգևորված՝ անվախ ձայներով,
Զարկում ամենի լերկ ժայռի կրծքին.

Զարկում են նորա ու մանրիկ-մանրիկ
Փշրվում, դառնում բիւրեղիկ շիթեր.
Ու անեղ զարկից հառաչում մեղմիկ,
Յաւճվ մրմնջում անէծքի երգեր...

Բայց—ծովըն—անտակ, ծովն—անսահման
Ալիքըն-անթիւ, ալիքն—անհամար...
Յայտում են խումբ-խումբ, քաջերի նման,
Ու նորից սկսում համերգը խելառ...

Պղտորված գոյնով, խորին բարկութեամբ
Ու խելացընճը աղաղակներով
Ելնում են նորա, համարձակութեամբ
Զորս կողմը շփոթում անթիւ խմբերով.

Ու ոգևորված, չքնաղ տաղերով,
Թռչում դէպ գոռոզ ժայռը՝ սընափառ.
Պինդ զարկում նորան մատաղ ուժերով
Ու, կամ գրոհ տալիս, կամ ջարդվում խաղառ...

Վերևից՝ կայծակ, հըրաշունչ կայծակ,
 Ներքևից՝ ծովի անեղ շառաչիւն.
 Վերևից՝ թնդիւն որոտ ու փայլակ,
 Ներքևից՝ ծովի գոռիւն ու գոչիւն...

Գոռ շանթի նման՝ ծովն է շանթ դառել,
 Սև ու մութ ամպեր հաւաքել գլխին.
 Մըրկի նման՝ մըրկի է դառել,
 Տեսքն ահարկո՛ւ, փրփուրը բերնին...



Ե Ր Ա Ձ.

Ազատասէր բռէր կուտին
 Տեսայ անուշ երազում,
 Ծաղկեայ փնջեր շուշան-կրծքին,
 Դէմքը խաղա՛ղ, բայց տրտում...

Տեսայ կուռի հովտում արնոտ՝
 Փունջը կրծքից պոկելիս.
 Կոլում ընկած քաջ եարի մօտ,
 Շիրմին ծաղիկ ցանելիս...

Տեսայ դողարիկ նուրը շուրթերին
 Կախարդ երգի՛ մըմունջներ,
 Վսեմ մահով ընկած եարին
 Ձօնած ուզմի՛ ներբողներ...

Բայց աչերին արցունք չըկար.—
 Եարը մեռա՛ւ քաջի պէս.
 Նա իր ազգի սիրոյ համար
 Կովեց, ընկա՛ւ ժպտերես...

Ու ինձ թվաց, թէ ես եմ այն.
Արիւնաներկ հովտի մէջ
Դեռ թարմ շիրմիս մօտ լսեւայն
Եարս է եկել սիրատենչ...

Ու ինձ թվաց, որ սիրադէմ
Նա հայ-կոյնն է շիրմիս քով.
Եւ ես... ծ, դեռ կենդանի եմ,
Ես շնչում եմ այն երգով...



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ 1987 ՎԱՐՎԱՐ

Այս գիրքը պատկանում է
Հայաստանի Գրադարանի և
Գրագրական կենտրոնի
և պահպանվում է որպես



ՀՀ Ազգային գրադարան



NL0321667

ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. Գերբնական հիւանդութիւն (պօէմա) . . . 20 կ.
2. Սրբազան ժամեր 20 կ.

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Ն .

1. «Փողոցի երգերից».
2. Ծովի աղջիկը (բալլադ).
3. Մէկը միւսի համար (դրամա երեք գործ.).



ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

